01/10.1/9227-11
2011-06-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Հովհաննես Սահակյանի, Կարեն Ավագյանի, Կարինե Աճեմյանի, Մկրտիչ Մինասյանի, Գրիգոր Մարգարյանի և Հերմինե Նաղդալյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածով և 3-րդ հոդվածի 1-ին մասով կատարվող փոփոխությունները հստակեցման կարիք ունեն, քանի որ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 26-րդ հոդվածների 2-րդ մասերում նշված՝ 97-րդ հոդվածի 2-րդ կետին հղումը սահմանում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածուների ընտրության հարցերի քննարկման ընթացակարգը, մինչդեռ նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող նոր խմբագրությամբ 97-րդ հոդվածի 5-րդ մասը վերաբերում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների ընտրության ընթացակարգին.

2) 2-րդ, 3-րդ հոդվածները և 5-րդ հոդվածով ներկայացվող՝ 97-րդ հոդվածի նոր խմբագրությունը պետք է համապատասխանեցվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին:

2. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով կատարվող փոփոխության առաջին նախադասության բովանդա-

կությունից պարզ չէ, թե խոսքը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի և անդամների որ քվեարկության մասին է: Բացի դրանից՝ ներկայացված նախագծի համաձայն ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի և անդամների առաջադրման, քվեարկության, նշանակման և հրաժարականի հետ կապված ոչ միայն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները, այլ նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները կարգավորվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահը նշանակում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի չորս անդամի, իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կազմից Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ:

3. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝

1) «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածից անհրաժեշտ է հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների 2-րդ մասերին.

2) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրում «լրացումներ» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացում» բառով, քանի որ նախագծում կատարվում է միայն մեկ լրացում.

3) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է նշել օրենքի ընդունման ամսաթիվը, մասնավորապես, «հունիսի» բառից հետո լրացնել «30» թիվը.

4) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

ա. վերնագիրը «լրացումներ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «և փոփոխություն» բառերով, քանի որ նախագծում կատարվում է նաև փոփոխություն,

բ. 1-ին հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու, այլ ոչ թե ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

”Ազգային ժողովի կանոնակարգ” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին”, “Սահմանադրական դատարանի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին”, “Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին”, “Մարդու իրավունքների պաշտպանի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին”, “Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին”, “Վերահսկիչ պալատի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին” և “Դատախազության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի “Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին” N 18-Ն որոշման համաձայն:

Գնահատման արդյունքում Նախագծերը՝

1. սոցիալական պաշտպանության ոլորտի վրա ունեն չեզոք ազդեցություն.
2. բնագավառի շահառուների վրա ազդեցության տեսանկյունից ենթակա չեն լրամշակման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում, դրանց կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն, քանի որ նախագծերով կանոնակարգվում են Ազգային Ժողովի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարաբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
մի շարք օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:
Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին>>, <<Մարդու իրավունքների պաշտպանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, << Վերահսկիչ պալատի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> և << Դատախազության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին>>, <<Մարդու իրավունքների պաշտպանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>>, << Վերահսկիչ պալատի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> և << Դատախազության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների (այսուհետ՝ օրենքների) նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին, պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Եզրակացություն

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Պ-1139-26.04.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ օրենք) 17-րդ հոդվածի 2-րդ կետի «97-րդ հոդվածի 2-րդ կետով» բառերը փոխարինել «97-րդ հոդվածի 5-րդ կետով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 4-րդ կետի «97-րդ հոդվածի 7-րդ կետով» բառերը փոխարինել «97-րդ հոդվածի 14-րդ կետով» բառերով.

2) 5-րդ կետը «դադարեցման» բառից հետո լրացնել «՝ պաշտոնանկ անելու» բառերով.

3) 6-րդ կետը «դադարեցման» բառից հետո լրացնել «՝ պաշտոնանկ անելու» բառերով:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետի «97-րդ հոդվածի 2-րդ կետով» բառերը փոխարինել «97-րդ հոդվածի 5-րդ կետով» բառերով.

2) 5-րդ կետը «դադարեցնելու» բառից հետո լրացնել «՝ պաշտոնանկ անելու» բառերը, իսկ «97-րդ հոդվածի 7-րդ կետով» բառերը փոխարինել «97-րդ հոդվածի 14-րդ կետով» բառերով.

3) 6-րդ կետը «դադարեցնելու» բառից հետո լրացնել «՝ պաշտոնանկ անելու» բառերով:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 97-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 97. ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

1. Պաշտոնում թեկնածուն առաջադրվում է, ինչպես նաեւ պաշտոնում նշանակելու մասին առաջարկությունը ներկայացնում է Սահմանադրությամբ եւ օրենքով իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը:

2. Սահմանադրության 83.-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան՝ Ազգային ժողովը Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ, իսկ սահմանադրական դատարանի կազմից՝ սահմանադրական դատարանի նախագահ:

Սահմանադրական դատարանի նախագահի եւ սահմանադրական դատարանի անդամի նշանակման մասին Ազգային ժողովի որոշումներն ընդունվում են գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Սահմանադրական դատարանի անդամը պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի նիստում տրված երդմամբ:

Ազգային ժողովը Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ գաղտնի քվեարկությամբ:

3. Սահմանադրության 83.-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականի պաշտոնում ընտրելու համար թեկնածուի առաջադրման իրավունքը պատկանում է խմբակցություններին եւ պատգամավորական խմբերին:

Իրավաբան-գիտնականներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

Ազգային ժողովի կողմից նշանակված իրավաբան-գիտնականի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ Ազգային ժողովի արձակման դեպքում:

Արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել, եթե նա պարբերաբար անհարգելի պատճառով չի մասնակցում Արդարադատության խորհրդի աշխատանքներին: Այս հիմքով իրավաբան գիտնական անդամի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ միջնորդությունը նշանակող մարմնին ներկայացնում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը:

4. Սահմանադրության 83.1. -րդ հոդվածին համապատասխան՝ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում ընտրելու համար թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդին:

Պաշտպանն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով:

Պաշտպանը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի նիստում տրված երդմամբ:

Պաշտպանն անփոփոխելի է: Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարում են օրենքով սահմանված կարգով, որի մասին Ազգային ժողովի նախագահն առաջիկա նիստում տեղեկացնում է պատգամավորներին:

Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում Պաշտպանի ընտրություններն անցկացվում են պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

5. Սահմանադրության 83.2.-րդ հոդվածի համապատասխան հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվող անկախ կարգավորող մարմնի անդամների կեսին վեց տարի ժամկետով ընտրում է Ազգային ժողովը:

Ազգային հանձնաժողով անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղում նշանակումը կամ ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության

Սահմանադրության 83.2-րդ հոդվածին համապատասխան՝ ապահովելով Ազգային հանձնաժողովի անդամների կեսի ընտրությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, իսկ մյուս կեսի նշանակումը Հանրապետության Նախագահի կողմից:

Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին հայտնում է Ազգային ժողովի նախագահին:

Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի ընտրության մրցութային հանձնաժողովի թեկնածուների առաջադրման առաջարկով Ազգային ժողովի նախագահը գրավոր դիմում է խմբակցություններին: Խմբակցությունների առաջարկությունների հիման վրա Ազգային ժողովի նախագահը 7-օրյա ժամկետում ձեւավորում է մրցութային հանձնաժողով:

Մրցութային հանձնաժողովի կազմում ընդդիմադիր խմբակցության կամ խմբակցությունների կողմից առաջարկվում է երկու թեկնածու, իսկ մնացած խմբակցությունների կողմից՝ չորս թեկնածու: Մրցութային հանձնաժողովի կազմում առաջադրվում են լրագրության, հեռահաղորդակցության, գործարարության, կառավարման, իրավագիտության, կրթության, մշակույթի, կրոնի բնագավառների հեղինակավոր գործիչներ եւ (կամ) այդ բնագավառներով զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները, Կառավարության անդամները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի աշխատակիցները, պետական ծառայողները եւ քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմինների անդամները չեն կարող ընդգրկվել մրցութային հանձնաժողովի կազմում:

Մրցութային հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ եւ քարտուղար:

Մրցութային հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, Ազգային ժողովի նախագահի սահմանած համապատասխան կարգով, իսկ մրցույթի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգային հարցերը կարգավորվում են մրցութային հանձնաժողովի որոշումներով:

Մրցութային հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների կեսից ավելին, իսկ որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների

մեծամասնությամբ:

Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի համար թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ոք՝ "Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:

Ազգային հանձնաժողովի անդամի թեկնածուների առաջադրման համար սահմանվում է 10-օրյա ժամկետ: Թեկնածուներն առաջադրվում են ինքնաառաջադրմամբ՝ ներկայացնելով երկու երաշխավորագիր զանգվածային լրատվության եւ հեռահաղորդակցության բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված եւ տվյալ բնագավառում

գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններից: Հավելյալ երաշխավորագիր կարող է տալ նաեւ Հանրային խորհուրդը:

Մրցութային հանձնաժողովը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցներով՝ ապահովելով տեղեկատվության մատչելիության համապետական ընդգրկվածությունը:

Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցել մրցույթի, եթե նա չի բավարարում "Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով սահմանված պահանջները, կամ առկա է այդ օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը:

Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթի համար դիմել է առնվազն մեկ մասնակից:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:

Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

Թեստերը կազմում է մրցութային հանձնաժողովը՝ ստուգելու համար մասնակիցների գիտելիքները՝

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության,

բ) "Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ) "Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ" Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ) "Զանգվածային լրատվության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի,

ե) "Տեղեկատվության ազատության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի,

զ) "Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին" կոնվենցիայի վերաբերյալ:

Համակարգչում զետեղված հարցաշարը ոչ ուշ, քան մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ պետք է հրապարակվի:

Թեստում յուրաքանչյուր հարց պետք է ունենա 3-4 ենթադրյալ պատասխան:

Յուրաքանչյուր հարց պետք է ունենա մեկ ճիշտ պատասխան:

Հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ստանում թեստավորման առաջադրանքների առնվազն 90%-ին ճիշտ պատասխանած մասնակիցները:

Մասնակիցների հետ հարցազրույց անցկացվում է հեռահաղորդակցության, լրագրության եւ արտահայտվելու ազատության կիրառման, ինչպես նաեւ կրթության, մշակույթի բնագավառների, գովազդի իրականացման, սոցիալական խմբերին կամ անչափահասներին ուղղված հաղորդումներին, դրանց հիմնախնդիրներին ուղղված հեռուստատեսային ծրագրերի ստեղծման, լուսաբանման ուղղությամբ:

Մրցութային հանձնաժողովը հարցազրույցից հետո յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն:

Եթե մրցույթի օրը մրցութային հանձնաժողովն իրավազոր չէ, ապա մրցույթը համարվում է չկայացած, եւ անցկացվում է կրկնակի մրցույթ: Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, եւ 10-օրյա ժամկետում անցկացվում է մրցույթ՝ ընդհանուր հիմունքներով:

Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է "Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին"

Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի կամ 45-րդ հոդվածով սահմանված հիմքերից որեւէ մեկը, ինչպես նաեւ մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել կամ ճիշտ չի պատասխանել թեստավորման առաջադրանքների առնվազն 90%-ին, ապա մրցույթը համարվում է չկայացած, եւ անցկացվում է նոր մրցույթ:

Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:

Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո մրցույթի արդյունքների վերաբերյալ եզրակացությունը մրցութային հանձնաժողովի նախագահը գրավոր ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին:

Մրցույթի արդյունքների հիման վրա Ազգային հանձնաժողովի անդամի ընտրության հարցը ներկայացվում է Ազգային ժողովի առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգ:

Ազգային ժողովում Ազգային հանձնաժողովի անդամի ընտրության հարցի քննարկման ժամանակ մրցույթի արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է նիստը նախագահողը, իսկ որպես թեկնածուներ դիտվում են մրցույթի հարցազրույցի փուլին մասնակցած անձինք:

Ազգային հանձնաժողովի անդամ է ընտրվում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն ստացած թեկնածուն:

Ազգային ժողովի կողմից Ազգային հանձնաժողովի անդամի ընտրության արդյունքների մասին տեղեկությունները Ազգային ժողովի նախագահը ընտրության հաջորդ օրը հրապարակում է մամուլում եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներում:

Ազգային հանձնաժողովի անդամ նշանակողի (ընտրողի) կողմից Ազգային հանձնաժողովում իր կողմից նշանակվելիք հերթական անդամին չնշանակելը (չընտրելը) հիմք չէ Ազգային հանձնաժողովի մյուս անդամ նշանակողի (ընտրողի)՝ իր նշանակմանը (ընտրմանը) ենթակա հաջորդ թափուր տեղի համար անդամ չնշանակելու (չընտրելու) համար:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել (ընտրվել)

Ազգային հանձնաժողովի անդամ:

6.Սահմանադրության 83.3. -րդ հոդվածին համապատասխան՝ կենտրոնական բանկի նախագահին Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի նախագահի նշանակման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել կենտրոնական բանկի նախագահի պաշտոնում:

Ազգային ժողովն օրենքով սահմանված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել կենտրոնական բանկի նախագահին:

7.Սահմանադրության 83.4. -րդ հոդվածին համապատասխան՝ վերահսկիչ պալատի նախագահին Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով:

Վերահսկիչ պալատի նախագահի նշանակման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնում:

Վերահսկիչ պալատի նախագահի հրաժարականի մասին դիմումը տրվում է Ազգային ժողովի նախագահի անունով՝ նախապես տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին:

Վերահսկիչ պալատի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարում են օրենքով սահմանված կարգով, որի մասին կազմված արձանագրությունը ստորագրում է Ազգային ժողովի նախագահը՝ այդ մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության Նախագահին:

8. Սահմանադրության 103.-րդ հոդվածին համապատասխան՝ գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով:

Գլխավոր դատախազի նշանակման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազի պաշտոնում:

Ազգային ժողովն օրենքով սահմանված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

9. Ազգային ժողովի նիստում պաշտոնում ընտրելու կամ նշանակելու հարցերը քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետեւյալ տարբերությամբ՝

ա) պաշտոնում ընտրելու կամ նշանակում կատարելու համար թեկնածուներ առաջադրելու կամ առաջարկություն ներկայացնելու, իսկ Ազգային հանձնաժողովի անդամի ընտրության հարցի քննարկման ժամանակ՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ներկայացնելու համար հատկացվում է մինչեւ 10 րոպե.

բ) որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս առաջադրված թեկնածուն.

գ) առաջադրված թեկնածուն կարող է ինքնաբացարկ հայտնել մինչեւ եզրափակիչ ելույթների ավարտը:

10. Սահմանադրության 83-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով, 83.3-րդ, 83.4.-րդ եւ 103.-րդ հոդվածներով նախատեսված յուրաքանչյուր պաշտոնում նշանակում կատարելու համար առաջարկվում է մեկ թեկնածու:

11. Եթե որեւէ այլ պաշտոնում ընտրվելու համար առաջադրվել է երկուսից ավելի թեկնածու, եւ նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ, ապա անցկացվում է կրկնական քվեարկություն, որին մասնակցում են առավել թվով ձայներ ստացած երկու թեկնածուները:

12. Եթե քվեարկությանը մասնակցել է երկու թեկնածու, եւ նրանցից ոչ մեկը չի ընտրվել, ապա անցկացվում են նոր ընտրություններ, եւ կարող են առաջադրվել նոր թեկնածություններ:

13. Ազգային ժողովի կողմից ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձն իր հրաժարականի մասին գրավոր դիմումը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, որի մասին նիստը վարողը հրապարակում է չորսօրյա նիստերի առաջիկա նիստում: Եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ երեք օրվա ընթացքում, տվյալ անձը գրավոր դիմումով՝

ա) հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նիստը վարողն առաջիկա նիստում Ազգային ժողովին տեղեկացնում է այդ մասին.

բ) հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա հրաժարականը համարվում է ընդունված:

14. Ազգային ժողովի կողմից ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու՝ պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող են ներկայացնել սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմինները կամ պաշտոնատար անձինք: Նախագիծը քննարկվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես հարակից զեկուցող հանդես է գալիս որոշման նախագծում նշված պաշտոնատար անձը:

15. Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83.-րդ հոդվածի 4-րդ կետին, 83.2-րդ, 83.3.-րդ, 83.4.-րդ եւ 103.-րդ հոդվա?ներին համապատասխան պաշտոնում ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձին վաղաժամկետ դադարեցնելու՝ պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշումներն ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ գաղտնի քվեարկությամբ:

Եթե պաշտոնում ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձի պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա հարցը հանվում է քննարկումից:

16.Պաշտոնում ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են օրենքով սահմանված կարգով:

17. Ազգային ժողովի կողմից ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձանց անձնական գործերի նախապատրաստումը, վարումը, հաշվառումը եւ պահպանումը իրականացվում է Ազգային ժողովի աշխատակազմի կողմից:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1139[1]-26.04.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սահմանադրական դատարանի նախագահի եւ անդամների առաջադրման, քվեարկության, նշանակման եւ հրաժարականի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով: Սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Ազգային ժողովը եւ Հանրապետության Նախագահը պետք է հաշվի առնեն նաեւ սահմանադրական դատարանի անդամի թեկնածուի բարոյական հատկանիշները:»:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «10 օր հետո» բառերը փոխարինել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1139[2]-26.04.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) լրացնել նոր «101.1.» հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

« ՀՈԴՎԱԾ 101.1. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԲԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Արդարադատության խորհրդի երկու իրավաբան - գիտնական նշանակվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի, իսկ երկուսը՝ Ազգային ժողովի կողմից։

2. Ազգային ժողովի կողմից նշանակված արդարադատության խորհրդի երկու իրավաբան - գիտնականի առաջադրման, քվեարկության, նշանակման եւ հրաժարականի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Նախագիծ
Պ-1139³-26.04.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 21-ի ՀՕ-23-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հետո լրացնել նոր «1.1.-րդ» մասով հետեւյալ բովանդակությամբ. «1.1. Պաշտպանի ընտրության, այդ թվում՝ առաջադրման, քվեարկության եւ հրաժարականի հետ կապված հարցերը կարգավորվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով։ ».

2) 2-րդ մասի «Պաշտպանին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջադրված թեկնածուներից։ Պաշտոնը ստանձնելիս Պաշտպանը տալիս է հետեւյալ երդումը.» նախադասությունները շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

« Մարդու իրավունքների պաշտպանը պաշտոնն ստանձնում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի նիստում տրված հետեւյալ երդմամբ.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 3-րդ կետի «10 օր հետո» բառերը փոխարինել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ազգային ժողովի նախագահն առաջիկա նիստում տեղեկացնում է պատգամավորներին Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին:».

3) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1139[4]-26.04.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի 2-րդ մասի «Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով:» բառերը փոխարինել ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1139[5]-26.04.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-4-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածում

1) 2-րդ մասի «Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով» բառերը փոխարինել ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:» բառերով:

2) ուժը կորցրած ճանաչել 6-րդ մասը:

3) 7-րդ մասի «15 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում» բառերով:

4) լրացնել նոր «9-րդ» մասով հետեւյալ բովանդակությամբ. «9. Վերասկիչ պալատի նախագահի առաջադրման, քվեարկության, նշանակման, հրաժարականի եւ լիազորությունների վաղաժամկետ դադարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1139[6]-26.04.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 36-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 1-ին նախադասությունը «Ազգային ժողովը» բառերից հետո լրացնել ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:» բառերով:

2) 1-ին մասի 2-ր եւ 3-ր նախադասությունները ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածը լրացնել նոր «4-րդ » մասով հետեւյալ բովանդակությամբ. «4. Գլխավոր դատախազի հրաժարականի, լիազորությունների վաղաժամկետ դադարման եւ պաշտոնանկության հետ կապված հարաբերությունները

կարգավորվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներեւ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում» լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության մասին

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում» լրացում կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է Ազգային ժողովի գործունեության կազմակերպման, ինչպես նաեւ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովման հարցերով որոշումներ ընդունելու անհրաժեշտությամբ:

Այսպես. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 4-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը պայմանավորվախ է 1995 թվականի հուլիսի 5-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածով, համաձայն որի ՀՀ Նախագահի հրաժարականն ընդունվում էր Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Թերեւս, դա է պատճառը, որ մինչ այժմ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետում պահպանվել է դրույթ, ըստ որի Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգի պարտադիր եւ ըստ անհրաժեշտության քննարկվող հարցերից է նաեւ Հանրապետության Նախագահի հրաժարականի մասին հարցը, որն ակնհայտորեն հակասում է Սահմանադրությանը եւ ենթակա է վերացման, քանի որ ներկա իրավակարգավորմամբ, եթե ՀՀ Նախագահը

հրաժարականը ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետը լրանալուն պես, երկօրյա ժամկետում հրաժարականը կրկին ներկայացնում է, ապա հրաժարականը համարվում է ընդունված:

Սահմանադրության 58-րդ եւ 62-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Նախագահի հրաժարականն ընդունելու վերաբերյալ Ազգային ժողովից համապատասխան որոշման ընդունում չի պահանջվում: Ավելին, նկատի ունենալով, որ ցանկացած որոշման ընդունում քվեարկության գործընթացի արդյունք է, ուստի գործնականում չի բացառվում, որ ՀՀ Նախագահի հրաժարականն ընդունելու հարցի առնչությամբ քվեարկության արդյունքում հրաժարականի ընդունումը մերժվի: Մինչդեռ, նման իրավիճակը կհակասի Սահմանադրության 58-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորմանն առ այն, որ այդ հոդվածով սահմանված ժամկետում հրաժարականի կրկնումն այն իրավական հիմքն է, որը բավարար է Նախագահի հրաժարականն ընդունված համարելու համար: Այսպիսով, Սահմանադրույան 58-րդ հոդվածի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Նախագահի հրաժարականի ընդունման փաստն արձանագրվում է Ազգային ժողովի նախագահի պաշտոնական հաղորդագրությամբ հանդես գալու, այլ ոչ թե Ազգային ժողովի որոշմամբ:

Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է Ազգային ժողովի կողմից ընդունվող որոշումներով, համաձայն որի Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ եւ 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, 62-րդ հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ եւ 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ: Հարկ է նշել, որ Ազգային ժողովի կողմից մի շարք պաշտոնատար անձանց՝ Ազգային ժողովի նախագահին, Ազգային ժողովի նախագահի երկու տեղակալներին, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահներին ընտրելու, նրանց լիազորությունների դադարման՝ այդ թվում վաղաժամկետ եւ հրաժարականի հարցերը, համապատասխան հոդվածներով կարգավորված են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով , մինչդեռ, Սահմանադրության 83-րդ, 83.1-րդ, 83.2-րդ, 83.3-րդ, 83.4-րդ եւ 103-րդ հոդվածներով նախատեսված պաշտոնատար անձանց նշանակելու (ընտրելու), նրանց լիազորությունների դադարման՝ այդ թվում վաղաժամկետ եւ հրաժարականի հարցերը կարգավորված են տարբեր օրենքներով: Փոփոխության արդյունքում Ազգային ժողովի կողմից Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնններին նշանակելու (ընտրելու), նրանց լիազորությունների դադարման, հրաժարականի եւ վաղաժամկետ դադարման՝ պաշտոնանկության մասին հարցերը կկարգավորվի «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով:

Փաթեթում ներառված մյուս նախագծերում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները շաղկապված են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու հետ: